# ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ «ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎԻ» ՀԱԼԵՊ—ԹԱՎՐԻԶ ՄԱՅՐՈՒՂՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՎԱԾԸ

*XVI—XVII դդ. Արևելք—Արևմուտք առևտրի և նրանում հայ վաճառականության դերի ուսումնասիրման համար կարևորագույն սկզբնաղբյուրներ են հայ առևտրականների թողած առևտրական մատյանները (հաշվետումարներ), օրագրերը, նամակները, պարտամուրհակները, վարկային բազմատիպ փաստաթղթերը, կտակները, ուղեչափությունները և նմանօրինակ այլ նյութերը։ Մինչև վերջին տարիները այս հսկայական նյութը փաստորեն կուսական վիճակում էր գտնվում։ Զաքարիա Ագուլեցու «Օրագրության»[1] հրատարակությունից հետո ոչինչ չէր արվել այս ուղղությամբ։ Վերջերս հրատարակվեց Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու «Հաշվետումարը»[2], որը կարևոր աղբյուր է Արևելքի երկրներում հայ վաճառականության ծավալած գործունեության ուսումնասիրության համար։ Կարևոր նշանակություն ունի նաև Նոր Ջուղայի առևտրական դպրոցի վարժապետ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» կամ «Վասն նորահաս մանկանց և երիտասարդ վաճառականաց խրատ» կոչվող ուսումնական ձեռնարկը, որին արդեն առիթ ենք ունեցել անդրադառնալու[3]։*

*Գիտական շրջանների մատչելի դարձնելու նպատակով ստորև հրապարակում ենք «Աշխարհաժողովի» Հալեպ—Թավրիզ առևտրական մայրուղուն վերաբերող հատվածը[4]։ Վերջում տվել ենք օտար բառերին, չափ ու կշռի միավորներին, ապրանքների անուններին և վարչատերիտորիալ տերմիններին վերաբերող համառոտ ծանոթագրություններ։*

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆ

* * *

244բ Դարձեալ Հալապայ որ դուս լինիս ելման, դապ Աջամըստան[1] լինիս
գօլման, յամէն տեղի խալճն-բալճն[2], բաքաթ-բաքաթ[3] գրած այ, որ
ներքևս կու տեսնես։
Հալապ, որ դուս հնիս ելման, ղարվազումն[4] բեռան Ա [1] ըռուպ[5]
և գումրուկչուն[6], սախչուն[7] Ա [1] ռուպ, գումիշարաչուն[8] Ա [1] մառ-
չիլ[9], Անթաբ՝ Ա [1] թիմին[10], Բէրանջուկն՝ Թ [9] թիմին Թ [9] ըս-
տակ[11] խալչ, Ջաֆարաղունէ գեղումն՝ Ա [1] մառչիլ, Գ [3] թիմին Զ
[6] ըստակ, Ուրֆայ բաջն[12] Գ [3] մառչիլ Գ [3] թիմին, նաւ չանց
կալման բեռան Դ [4] թիմին, Դիարբէքիր՝ ճոթին[13] Ա [1] մառչիլ,
փարփաթիանին[14] Ա [1] մառչիլ, Նազիրանէ՝[15] բեռան Ա [1] մառչիլ
կէս, սուպաշուն՝[16] Ա [1] մառչիլ Ա [1] թիմին, գումրուկ-խասախչա-
նէն՝ բեռան Ը [8] թիմին, օղլան սախչասին՝[17] բեռան Ա [1] թիմին Ը
245ա [8] ըստակ, ‖ ղըլախին՝[18] փէշքաշ[19], պաթլախումն՝[20] Ա [1] մառչիլ
կէս բեռան, Հզու՝ բեռան Գ [3] մառչիլ, Ղրղի Ա [1] մառչիլ Թ [9]
թիմին, Բիթլիզ՝ Գ [3] մառչիլ Թ [9] թիմին, Վանայ բաջն, որ Բիթլիզ
յինք կառում՝ Ա [1] մառչիլ Դ [4] թիմին, Դատվան՝ Ա [1] մառչիլ
կէս, Ամելչօվկ՝ կէս մառչիլ, Առճէշ՝ Ա [1] մառչիլ, Բանդմահի՝ Գ [3]
մառչիլ, Նուշար՝ Դ [4] մառչիլ Թ [9] թիմին, Զօրս՝ ըրախտարի[21]
ԱՌԵԾ [1500] դիան[22], Մարանտ՝ բեռան ՌԲՃ [1200] դիան, Թավրէզ՝
ԱՌԳԾ [1320] դիան։

---

[1] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938։ Այս շարքում պետք է հիշատակել նաև Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ» գիրքը, Ամստերդամ, 1699։

[2] Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, աշխատասիրությամբ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի, Երևան, 1984։

[3] Վահան Փափազյան, Թավրիզ—Հալեպ առևտրական ճանապարհը XVII դարում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, № 2, էջ 65—70)։

[4] Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 8443, էջ 244բ—248բ։

Դարձնալ Անթապայ վերայ խսչպն[23].
Մալաթայ՝ Դ [4] թիմին, Քամախումն՝ Դ [4] թիմին, Արզնկան՝
Գ [3] թիմին Զ [6] ըստակ, Իլիչումն՝ Գ [3] թիմին Զ [6] ըստակ.
Առզռում նե մաման՝ եասախչանայ[24] Զ [6] ըստակ և դուս ելման էլ Զ
[6] ըստակ, գամրուկըն Նամալում[25], Ա [1] մառչիլ և թաքդիր ախչա-
245բ նի՝[26] Բ [2] մառչիլ և թասկիրի՝[27] Ա [1] լռուպ, ‖ Ա [1] թիմի, Յա-
սանղալումն՝ կէս մառչիլ, Ջօբայքռփումն՝ թասկիրայ տեսնելէ Ա [1]
լռուպ, Կըպըզվան՝ Բ [2] մառչիլ կէս, եաղուչում՝[28] Ա [1] թիմին, Յա-
րեան՝ խանին բաչն ՌԲՃ [1200] դիան, խանին տղին ԲՃ [200] դիան,
արաղբէկին տղէքոցն[29] ԱՃ [100] դիան, Նախիչեւան՝ բեռան ԲՌ [2000]
դիան և նվիսանդին՝[30] Ծ [50] դիան, Մարանդ՝ ԲՌՋԾԿ [2660] Թարվէզ՝
ԱՌԴԺԻ [1320] դիան։
Առզռում դումրուկին թասվիլն[31] այ որ գրած այ այս ներքինս.
Լօնդրինէն[32] Թ [9] մառչիլ, սայէն[32] Թ [9] մառչիլ, սղըլաթն[34] Թ
[9] մառչիլ, լօնդրէն[35] Գ [3] մառչիլ Ե [5] թիմի, աղբաղն[36] Զ [6]
մառչիլ, գռդլոմ[37] ուխտաբեռն ԻԴ [24] մառչիլ, ալմազթրաշ խալե-
լին[38] ուխտարեռն Ծ [50] մառչիլ, փուչդի[39] բազչէն[40] ԺԲ [12] մառչիլ,
ճարմակ ջամն[41] ԺԸ [18] մառչիլ, ալվանդ ջամն[42] ԺԲ [12] մառչիլ, սի-
246ա սոյ ջամն[43] Դ [4] ‖ մառչիլ, շիշոյ ջամն[44] Ը [8] մառչիլ, խուրտա-
վաթն[45] ԺԲ [12] մառչիլ, ղոմզն[46], Ա [1] յողէն[47], որ ԴՃ [400] դրամ
այ, Բ [2] մառչիլ, քարբարն՝[48] դրաշն[49], յողէն Բ [2] մառչիլ, խամ
քարբարն՝[50] յողէն Ա [1] մառչիլ, մոջամն[51], բարբաստին[52] շաքին՝[53],
որ ԱՃ [100] դրամ այ, Գ [3] մառչիլ կտան, ղուշէթին[54] քաշն, մի-
զանի[55] մոջամին քաշն Թ [9] թիմի, հազարիմ[56] մոջամի քաշն Ե [5]
թիմի, զֆրանին[57] և թրիաքին[58] յողէն Զ [6] թիմին, Նազլուղարէն[59],
ղիտրն[60] Ե [5] թիմին, քարաստալն[61] ղիտրն Գ [3] թիմին, թնօքէն[62]
ղիտրն Գ [3] թիմին, դեղին թնօքէն՝ ղիտրն Ե [5] թիմին, ճարմակն՝
ղիտրն Դ [4] թիմին, ջղջղէն՝[63] ղիտրն՝ Զ [6] թիմին, թիլայ[64] լաջ-
վարդն՝[65] ղիտրն Թ [9] թիմին, ըռադն՝[66] ղիտրն Զ [6] թիմի, ուստ-
փէջն՝[67] ղիտրն Գ [3] թիմի, զառդիպայ[68] դօ[ն]լուղն՝[69] Գ [3] մառչիլ,
246բ ատլասն՝[70] տօնլուղն Ա [1] մառչիլ, վանատկին խառէն՝[71] ‖ Թ [9]
թիմի, շալ փարփաթիանն՝[72] Ա [1] մառչիլ Գ [3] թիմի, փարփա-
թիանն՝ Ա [1] մառչիլ, չիվայ[73] ղիտրն Ա [1] մառչիլ, ղնջիրայ[74] յօ-
ղէն՝ Գ [3] թիմի, դանա մազդաքի՝[75] յօղէն Գ [3] թիմի, ղալինչատիր՝[76]
ղիտրն Գ [3] թիմի, պալուղդիշի՝[77] յօղէն Գ [3] թիմի, Աջամստանայ
եկած ճոթա բեռն, ուխտի բեռն ԿԳ [63] մառչիլ, քնար աբրիշումն՝[78]
ղիտրն Ա [1] մառչիլ, Գ [3] թիմի, Լայիջան աբրիշումն՝[79] ղիտրն Ա
[1] մառչիլ Ա (1) թիմի, ալվանդ աբրիշումն՝[80] ղիտրն Բ [2] մառչիլ
Զ [6] թիմի, լեղակն՝ ղիտրն Ա [1] մառչիլ Գ [3] թիմի, սաֆալէն[81]
ղիտրն ԺԱ (11) թիմի, ըռէվանչօբ[82], չինին՝[83] ղիտրն Ա [1] մառչիլ Գ
[3] թիմի, դրամանէն՝[84] բեռն ԺԴ (14) մառչիլ, քաշայ խալին՝[85] ԼԱ
(31) մառչիլ Զ [6] թիմին, աղվաղն՝[86] բեռն ԿԳ [63] մառչիլ, ղանոմի
247ա վիշայ՝[87] բեռն Է [7] մառչիլ, սէվ դֆդիկն՝[88] ‖ Ը [8] մառչիլ, կարմիր
դֆտիկն բեռն ԺԲ [12] մառչիլ, լաջվարդն՝ ղիտրն Ա [1] մառչիլ Գ
[3] թիմի, տառչնին յօղէն Գ [3] թիմին, ջավզն՝[89] յօղէն Գ [3] թիմի,
զանճաֆիլն՝[90] ղիտրն Թ (9) թիմի, բիբարն՝ ղիտրն Ե (5) թիմի, ղառ-
նիֆաւուխն՝[91] ղիտրն Գ [3] թիմի, սէլանն՝[92] ղիտրն Ա [1] մառչիլ Գ
[3] թիմի, քաղաթին[93] բեռն՝ Գ [3] մառչիլ, Նազրանայ՝ աբրշմէն կէս-
նյինք կառոն, Զ [6] թիմի, քաղաթին կէսն յինք կառոն՝ Զ [6] թիմի,
ղումաշին[94] բեռն ԺԲ [12] մառչիլ, սաղատն՝[95] Գ [3] մառչիլ, ու խա-
լասին՝[96] սաղն՝[97] Բ [2] մառչիլ, սաղատն՝ Ա [1] մառչիլ, էմինին[98]
ուքաղշասին՝[99] Ա [1] մառչիլ, թապտիրին՝ Գ [3] մառչիլ, էն գլխէն
Ֆռանկստանայ գոլողէն, սավատէն՝[100] սուֆախչասին[101] Բ [2] մառ-
չիլ է։

Թէ յիմանաս սվիլէն[102] ինչպէս կու քաշէն, այս պէս այ, որ գրած է.
Ա [1] չանքն՝[103] ԺԷ [17] սվիլ այ, ԾԹ [59] չաքում՝ ԱՌ (1000) մառչիլ
247բ այ, ‖ էս ԾԹ [59] չաքումէն Գ [3] սվիլայ վեռ կառուս, էն չաղն[104]
այ Ռ [1000] մառչիլ, որ Ա [1] մառչիլն Ը [8] դրամ այ, ՁԴ [84]
գրան[105] այ ԺԷ-[ն] [17] Ա [1] չաքի այ, որ Ա [1] չաքին ՃԾ [150]
դրամ է. Այսպէս էս...

Հալապ աբրշմի դալանայ՝[106] Զ [6] թիմի, յամէն ԺԵ [15] վաղ-
նայ[107] խանչում՝[108] Ա [1] մառչիլ, ղափընչում՝[109] յամէն ԺԵ [15] վաղ-
նի Զ [6] թիմի, խանչում սարղֆլին՝[110] Ա [1] օդին[111] Բ [2] մառչիլ
Զ [6] թիմի, օդին քըէ՝[112] Թ [9] թիմի, օղայպաշին[113] յինք կառում Ա
[1] գուլ[114], խանչին յինք կառում Ա [1] գուլ, միզանդարն[115] յինք կա-
ռու Ա [1] գուլ, ֆռանկ[116] ասախչիանէն յինք կառու Ա [1] գուլ, Հա-
մալն՝[117] Ա [1] գուլ, գոմրուկչում նօքարն[118] յինք կառու Բ [2] գուլ,
Հալապայ աբրշմին գոմրուկ՝ վաղնին Բ [2] մառչիլ Զ [6] թիմի, Ա
[1] վաղնէն Ե [5] ղիտր Հալապի[119] այ, վաղնին Զ [6] թիմի, [ս]ա-
ւայի[120] մառչլին Ա [1] շայի[121], սարղֆլին՝ Ա [1] շային Ե [5] ըս-
248ա տակ այ, ‖ գոմրուկն ելաւ վաղնին Գ [3] մառչիլ Գ [3] շայի, գու-
միշարաչում՝ Ա [1] մառչիլ, գոմրուկասախչանէն՝ Գ [3] թիմի, ղա-
փընչում՝ Գ (3) թիմի։

Գիլանայ քարն[122] ԱՌԸՃ [1800] դրամ[123] այ, ՌԲՃ [1200] մսխալ
այ[124]։ Թիլանի[125] քարն ԲՌԴՃ [2400] դրամ այ, ԱՌՁՃ [1600] մսխալ
այ։ Շային քարն[126] ԱՌԸՃ [1800] դրամ է, Դ [4]յօղայ կէս այ։ Գիլա-
նայ քարն ԲՃ [200] դրամ այ, Թիլանի քարն Զ [6] յօղայ է, Նախչա-
վանայ քարն Է [7] յօղայ է, Ա [1] ղիտր կէս շայի այ, Ա [1] ղիտր
Թիլանի այ, Հալապայ քարն ԷՃԻ [720] դրամ այ։ Շամայ[127] քարն ԶՃ
[600] դրամ այ, Դ [4] մսխալ այ, ամայ աբրշմին քարն ԶՃԾ [650]
դրամ այ, վերոյ կուքաշեն, ոսկաքարն ԱՃԺ [110] դրամ այ, արծաթի
պզտիկ քարն ԱՃ [100] դրամ այ, արծաթի մեծ քարն ԱՃԺ [110]
դրամ այ։ Մուշամին չաքն ԱՃ [100] դրամ կասեն, ամայ թէ առըն կա-
րեն՝ Է [7] դրամ պակաս կուխսէպէն։ Օֆտատայ[128] ղումզին քարն ԴՃ
248բ [400] դրամ այ, ‖ Ա [1] յօղայ այ։ Հալապի Գ [3] գազն Բ [2] գազ
շայի այ։ Հալապի Բ [2] ղիրեթ[129] կէսն Ա [1] ղիտր շայի այ։ Թրիա-
քին քարն ԱՃԺ (110) դրամ այ, մշկին[130] քարն ԱՃՁԷ [187] դրամ կէս
այ. Գ [3] դրամն Բ [2] մսխալ այ։ Առզռումայ քարն Զ [6] յօղայ է,
Մաշատին քարն ԹՃ [900] դրամ այ։

Դարձեալ մին մարդ որ ուզենայ Հալապ ապրանք տանի, խալչն
յիմանայ։ Ավալէ[131] տպրիշումն որ քաղաք լինի մտման, ղափի ախչա-
սի[132] յինք կառում Ա [1] բեռան Ա [1] ռուպ կէս, եասախչանայ յինք
կառում բեռան Ա [1]ըռուպ, փաշայ ախչասի[133] յինք կառում բեռան
Գ [3] մառչիլ, Ա [1] ըռուպ։ Էտ խալչն կտայ գնայ գումրուկ։

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իրան։
2. Ծախս, մաքս։
3. Տեսակ-տեսակ։
4. Քաղաքային դարպաս։
5. Քառորդ։ Տվյալ դեպքում $^1/_4$ ասլանլու։ Օսմանյան Թուրքիայում օգտագործվող ոսկե դրամ։ 16 ասլանլուն հավասար էր մեկ թումանի։
6. Մաքսային պաշտոնյա։
7. Ճիշտը՝ յասախչի—հսկիչ։
8. «Արծաթ որոնող» (թուրք.)։ Մաքսային պաշտոնյա, որի պարտականությունն է եղել ստուգել առևտրականների մոտ գտնվող արծաթի քանակը։

9. Մարսիլի—եվրոպական արծաթ դրամ։ Գործածության մեջ են եղել տարբեր երկրների և տեսակների մարսիլիներ, որոնց քաշը միջին հաշվով եղել է 24,6—24,9 գր.։

10. Կոստանդ Ջուղայեցու և Ղուկաս Վանանդեցու տվյալներով 10 թիմին հավասար էր 1 ասլանլուի։

11. Արծաթ դրամ, որ նաև կոչվել է «սպիտակ» (թուրք. «ակչե»)։ Նույն աղբյուրների վկայությամբ 110 ոտակը հավասար էր 1 ասլանլուի։

12. Մաքս։

13. Կտոր, հատ, ինչպես նաև գործվածք։

14. Գործվածքի տեսակ։

15. Մաքսատան հսկիչին՝ նազիրին տրվող գումարը։

16. Քաղաքագլուխ։

17. Օղլան են կոչվել զինված պահակություն անող հսկիչները։ Հայկական աղբյուրներում կոչվում են «տղա», որ թուրք. օղլան-ի բառացի թարգմանությունն է։ Դրանց վճարվող տուրքը կոչվել է «օղլան աղչասի»։

18. Զմեռանոց։ Այսպես էին կոչվում քաղաքային կայազորների զորանոցները։

19. Նվեր կամ նվերի անվան տակ տրվող պարտադիր տուրք։

20. Ճահիճ։

21. Ճանապարհապաշտպան պաշտոնյաներին՝ ռահդարներին տրվող հարկ։

22. Դինար—դրամական միավոր Իրանում։ XVII դ. կային 5—1000 դիանանոց կամ դինարանոց դրամներ, որոնցից առավել տարածվածը 200-դինարանոց արծաթ դրամն էր, որ կոչվում էր աբասի։

23. Հաշիվ։

24. Յասախչուն կամ հսկիչին տրվող տուրք։

25. Անհայտ, անորոշ։

26. Պետք է լինի «Թադբիր աղչասի», որ նշանակում է խորհրդի համար տրվող դրամ։

27. Անցաթուղթ, փաստաթուղթ։

28. Յաղուշի—գրագիր (թուրք.)։

29. Երևանից Նախչևան ճանապարհին, հավանաբար, եղել է կարավաններին ուղեկցող պաշտոնյա, որը կոչվել է «տրաղբեկի»։ Նրա ստորադաս զինված պահակախմբի «տղաներին» ևս վճարվել է 100 դինար։

30. Նվիսանդա—գրագիր (պրսկ.)։

31. Մանրամասն բացատրություն, նկարագրություն։

32. Անգլիական մահուդի տեսակ։

33. Գործվածքի տեսակ։

34. Կարմիր բրդե կտոր։

35. Անգլիական մահուդի տեսակ։

36. Հավանաբար, գործվածքի տեսակ։

37. Էժանագին քար։

38. Ալմաստով հղկված կամ բյուրեղյա հայելի։

39. Պիկնոց կամ հենաբարձ։

40. Կապ, կապոց։

41. Լուսամուտի փոքր չափսի ապակի։

42. Գունավոր, գույնզգույն ապակի։

43. Ապակու տեսակ։

44. Ապակու տեսակ։

45. Մանր ապրանքներ։

46. Կարմիր ներկ։

47. Հողա կամ թուրք. հոկա, ծանրության քաշ, որ Թուրքիայում հավասար էր 1, 283 կգ.։

48. Սաթ։

49. Հղկվածք։

50. Չհղկված, անմշակ սաթ։

51. Բուստ, մարջան։

52. Բեռնաչափի՝ տեղում ընդունված կարգը։

53. Յուրաքանչյուր քաշը, որ հավասար է եղել 100 դրամի։

54. Հավանաբար մարջանի տեսակ։

55. Բառացի նշանակում է «կչռային», հավանաբար, մարջանի տեսակ։

56. Մարջանի տեսակ։

57. Շաֆրան։

58. Հաշիշ։

59. Անծանոթ ապրանք։

60. Քաշի միավոր, որ պարսկական աղբյուրներում կոչվում է «ման»։ Իրանում պետական հաշիվներում օգտագործվում էր Թավրիզի մանը, որ հայտնի էր նաև որպես «Շահի լիտր» և կշռում էր 2,838 կգ.։ «Աջամստանայ» կոչվող լիտրը, որ պարսկական և եվրոպական աղբյուրներում կոչվում էր «ման-է շահ», կշռում էր 5, 675 կգ.

61. Բյուրեղ։

62. Թանիքե—թիթեղ (թուրք.)։

63. Բուժիչ խոտ։ Հայ. դիմուկա բույս։

64. Արաբերեն «թիլա» նշանակում է ոսկի, հավանաբար, պետք է հասկանալ «ոսկերանգ»։

65. Երկնագույն ներկ, լազուր։

66. Անորոշ ապրանք։

67. Անորոշ ապրանք։

68. Ոսկեկար դիպակ։

69. Հագուստացու։

70. Մետաքսյա գործվածք։

71. Վենետիկյան մետաքսյա, ալիքավոր, թանկարժեք գործվածք։

72. Բրդյա գործվածք։

73. Հավանաբար, պրսկ. «ջիվա»—սնդիկ։

74. Փոքր շղթա։

75. Հատիկ մաստակ։

76. Անուշադրի (նշադիր) ամոնիակի քլորատ, որ օգտագործվում է պղնձեղենը անագապոծելիս (կլայեկելիս)։

77. Ձկան ատամ։

78. Մետաքս։

79. Լահիջանի մետաքս։ Սա համարվում էր որակով երկրորդը Իրանից արտահանվող մետաքսի մեջ։

80. Գույնզգույն, ալվան մետաքս։

81. Խնցեղեն։

82. Խավարծիլի արմատ—(Rhabarbarum, Rheum)։ Օգտագործվում էր որպես լուծողական, կոչվում էր նաև խաշնդեղ։ Ընտիր տեսակը բերվում էր Չինաստանի Հվանգհու գետից դեպի հարավ ընկած շրջաններից, որն այն ժամանակ կոչվում էր Խաթայ։

83. Չինականը։

84. Բուժիչ բույս—Dophna gnidium։

84. Անորոշ ապրանք։

85. Անորոշ ապրանք։

86. Անորոշ ապրանք։

87. Անորոշ ապրանք։

88. Այծի գզած բուրդ։

89. Մուսկաթի ընկույզ։

90. Կոճապղպեղ (Zingiberecees)։

91. Լվախոտի սերմ (Plantago Psyllium), միջատների դեմ պայքարելու համար։

92. Արմավի հյութ։

93. Թուղթ։

94. Թանկարժեք կտոր։

95. Պակասավոր, թերի։

96. Մաքուր, անխառն, զուտ։

97. Ամբողջական, անթերի։

98. Կշեռքի վերակացու։

99. «Բեռան ակչե»—ապրանքները կշռելու համար վերակացուին տրվող տուրք։

100. Հավանաբար, արաբ. «սավադ»—արվարձան բառից։ Թիրեն՝ քաղաքից դուրս, դեռ քաղաք չմտած։

101. Բրդի հարկ։

102. Սեփլյան (ապրանքի տեսակ)։

103. Հավանաբար, պետք է լինի «շլաքն»—թուրք. «քաշլը»։

104. Ժամանակ, պահ։

105. Մանր քաշի միավոր. 0, 622 գր.։

106. Թերևս պետք է լինի «Դալալանա». դալալին՝ միջնորդին վճարվող տոկոս, միջնորդչեք։

107. Քաշ, մեկ կշիռ։

108. Պանդոկապետ։

109. Դռնապան։

110. Պանդոկապետին տրվող կողպեքի վարձ։

111. Օդա—սենյակ։

112. Վարձ։

113. Սենեկապետ։

114. Գուլզեն։

115. Կշռող։

116. Եվրոպացի հսկիչին տրվող տուրք։

117. Բեռնակիր։

118. Մաքսապետի ծառա։

119. Հալեպի ղիտր։

120. Բացի, ի բաց առյալ։

121. Պարսկական 50 դինարանոց արծաթ դրամ, որ XVII դ. վերջին կշռում էր մոտ 2 գր. (1,8896 գր.)։

122. Ի նկատի ունի Գիլանի ղիտրը։

123. Քաշի փոքր միավոր—2,40 գր.։

124. Քաշի փոքր միավոր—4,5 գր.

125. Մետաքսի տեսակ. հավանաբար, մանված։

126. Ի նկատի ունի «շահի մանը»—5,675 կգ։

127. Դամասկոսի ղիտր։

128. Ցածրորակ, ընկած։

129. Ղիրեթը մանր քաշ է, որ հավասար է 0,20 գրամի։ Կարծում ենք, սակայն, որ այստեղ գրչի սխալ կա. պետք է լինի «ղիտր», քանի որ իրոք Հալեպի 2,5 ղիտրը հավասար է եղել մեկ շահի ղիտրի (3 կգ)։

130. Մուշկ։

131. Սկզբից, նախապես։

132. Քաղաքի դարպասից ներս մտնելիս տրվող տուրք։

133. Փաշային տրվող տուրք։